Ծուշանիկ Կուրղինյան

Վաղ առավոտյան մշուշի միջից . . .

Վաղ առավոտյան մշուշի միջից
Ես ոգիների խմբեր եմ տեսնում .
Եվ անմահության քաղցր անուրջից
Անհայտ վայրերի մաղթանքը լսում:

Այնպե՜ս գեղեցիկ՝
Ջինջ, անվիշտ, անմեղ .
Այնքան թափանցիկ՝
Թափորով շքեղ:

Կես գիշերային լռիկ խավարում
Մեղմ գալարումով ոգիներ կիջնեն,
Եվ աստվածային շունչը երկրում
Խաղաղ երգերով քուն կը տարածեն:

Այնպե՜ս հոգեթով
Տեսք կա նրանց մեջ .
Այնքան խոհերով
Կանեն ելևէջ:

Եվ եթե մարդիկ լսեին ինձպես
Այն խորհրդավոր խոսքերն անձայն,
Որ երկրին մոտիկ, ոգիներն այն վես

Մտքերին մոլոր կյանք, հոդի կուտան՝

Չէր լինի տանջանք,
Վիշտ, արցունք, գերի,
Ոչ էլ անփրկանք
Թախիծ վշտերի . . .

1907 թ. 12. ապրիլի